

դժուարին պիտի ըլլար պետութեանց այսպիսի շէնքերու ամեն կարևոր ծախքը լեցնել. ուստի և խելքով սահմանած են այնպիսի կանոններ՝ որով գաւառներու վրայ կը ծանրանան, ստիպելով որ իւրաքանչիւր ոք իր վիճակին համեմատ տուրք մը ձգէ ընդհանուր արկեղ մէջ: Ասանկով հարուստ գաւառներ կը սատարեն աղքատ գաւառներու մէջ հաստատուած դպրոցաց ծախքին. և ուսումը՝ որ ազգային շահու գործ է, կը բաժնուի ու կը մասնաւորի ամեն քաղաքացւոյ:

Այն կողմերը քաղաք օտարականին սրտի յուզման և զարմանքի նիւթ է՝ երբ կանկ առնելով այն դպրոցաց առջև, տղայոց ելլելու կամ մտնելու ատեննին՝ նկատէ անոնց երեսին ուրախութիւնը, կարգաւորութիւնը, և իրենց ապագայ կեանքը երեսներնուն վրայ նկարուած: Շատ ու զանազանեալ թուով, բայց աւանդն համանման սրտերնուն բարութեամբ և դիմաց զուարթութեամբ, ամենուն վրան զլուխը կոկիկ, խնամոտք իրենց անձին ու զրբերնուն մաքրութեանը, իրենց կերպէն կամ ընթացքէն կարծել կու տան թէ բաւական հարուստ անձինքներու զուկըներ ըլլան: Սակայն ան տղոց մեծագոյն մասը աղքատ արուեստաւորաց կամ գործաւորաց որդիք են:

Կը շարունակուի:

ԳԱՂՂԻԱ Ի 1871

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Վէռսայցիք 'ի Բարիկ:

(Տես Հատ. ԻԹ. Էրես 353)

Մայիսի 21-ը օրը Բարիկու պարիսպներէն դուրս հարիւր հազար վէռսայցիք վեց հարիւր թնդանթով կազմ ու պատրաստ կեցած էին քաղքին վրայ յարձրկելու: Արդէն քանի մը օրէ 'ի վեր

շարունակ զպարիսպը գնդակոծելով՝ շատ խրամներ բացած էին: Այն խրամից ետեւ դաշնակցաց պատնէշներուն ահեղ պատրաստութիւնները կը տեսնուէին, որմէն կը գուշակուէր թէ կը ունենաւ ջարդը դարհուրելի ըլլալու էր: Ինչպէս թէ յոգնած, վէռսայցիք մայիսի 21-22-ն գիշերը առանց հարուած մըն ալ արձրկելու անցուցին: Արդեօք լքած յուսահատեալ էին իրենց ձեռնարկը յաջողցնելու, թէ ահաւոր հետեանքներուն սարսափը սրտերնին լըքուցեր էր և ուրիշ եւր մը կը բնառէին գործին: Դաշնակիցք չէին կրնար ստոյգը գուշակել: Եւ մինչդեռ իրենք ալ տարակուսեալ կեցեր էին, յանկարծ 22-ին առաւօտը զարհուրանաց ձայն մը կը լսուի թէ՝ վէռսայցիք քաղաքը մըտեր են:

« Եանկարծ, կ'ըսէ ակնատեսս, մօտ հրետաձգութեանց շառաչմունքէն, ուրմբաց սուլելէն և հրացանից ստէպ ստէպ թնդալէն, կ'արթննամ. և անմիջապէս տնէս կ'ելլեմ որ եղածը ստուգեմ: Որու կը հարցնեմ ամենքը ինձի կը պատասխանեն թէ զօրքը քաղաքը մտեր է: Ինչպէս, ո՞ր կողմէն, ո՞ր ժամուն, կը հարցնեմ մէկ քանի ազգային պահանջողաց, որ Տուօ թաղապետութեան գաւիթը կը յարձրկին, « Մատնուեցանք », կանչելով: Ասոնք եղածին վրայ շատ բան չեն գիտեր, որովհետեւ Դրոքատէրոյէն կու գան, ուր վէռսայցից մօտենալովը թողեր փախեր են:

ՅՕ-էջը, 'ի Շան տը Մառս կռիւ կ'ըլլուի: Արդեօք վէռսայցիք երեկ գիշեր թէ այս առտու յարձրկեր են քաղքին վրայ. անկարելի է թէ ստոյգ բան մը հասկցուի այն խառնակ պատասխաններէն: Քաղաքական ճարտարապետի մը համար կը զուրցուի թէ վէռսայցից նշան ըրած ըլլայ: Մովային գնդապետ մըն է որ նախ և առաջ նետուելով առջինը եղեր է մտնելու: Երեսնիւ չափ մարդիկ յանկարծ փողոցը կը յարձրկին կանչելով. « Պէտք է պատնէշ շինենք »: Ես իսկոյն կը հեռանամ

անկէ որ չըլլայ թէ բռնադատեն զիս քարեր կրելու: Հրետից շառաչը ամենամօտ կ'երևայ: Գլխուս վրայէն ուռմբք սուլելով կ'անցնին, և յանկարծ այս ձայնը կը լսեմ, թէ Մոնմառգրի հրետանիք զԱրք տը Դրիոնֆ կը գնդակօծեն...: Պուլվառներուն վրայ ամենևին ժուռ եկող մը չտեսնուիր, հապա մերթ ընդ մերթ անցւոր մը որ շտապաւ կ'անցնի կ'երթայ: Սրճանոցք ու խանութք փակ են: Միզօսայեօղներուն ընդհատ ճայթռոցը կը կրկնապատկի ու հետզհետէ կը մերձենայ, և ինծի անանկ մը կ'երևայ, ինչպէս թէ կռիւը հոն դիմացս և ամենամօտ ըլլուէր: Հազարու մէկ իրարու հակառակ ենթադրութիւններ միտքս կ'իյնան ու զիս կը զարհուրեցնեն, և հոս, այս գրեթէ անմարդի պուլվառին վրայ և ոչ մէկ մը կը տեսնեմ որու կարենամ ճշմարիտը հարցընել: Գուցէ արդ իսկ, փողոց մը խոտորելով, կռուին առջիւր գտնուիմ: Մատըլէնի ուղղութեամբ յառաջ կը քալեմ խոհեմութենէ աւելի բուռն ըղձէ մը դրդեալ: Ծօսէ տ'Անդէնի մօտենալով մարդոց, կանանց ու տղայոց խռովայոյզ ամբոխ մը կը նշմարեմ որ յարատեւ շարժման մը մէջ է սալայատակին քարերը կրելով: Պատնէշ մըն է որ կը շինեն, որ և արդէն մէկ մեղրի չափ բարձրացած է: Յանկարծ ծանր կառաց անիւներուն հօլովելուն ձայնը կը լսեմ. կը դառնամ և արտաքոյ կարգի բան մը կը տեսնեմ. պատառատուն ըզզեատներով, սևադէմ, զազիր և սէգ կանայք, փռիւգացի խոյրը զլուխնին անցուցած, հանդերձնուն օձիքը վերուցած ու մէջքերնուն կապած, միզօղայեօղի մը լծուեր վազելով կը տանին: Ուրիշ կանայք նմանապէս միզօղայեօղը ետեւէն կը մղեն կամ անիւներուն հօլովումը կ'երազեն: Երազաբար ու մեծ աղմկաւ առջևէս կ'անցնին, ես ալ մեծաքայլ անոնց ետեւէն կը փութամ. անոնք պատնիշին առջևը կանկ կ'առնուն, ուր միւս խռովարարք ցընծալից աղաղակներով այն գործին կ'ընդունին: Երբ լծուած կանայք չուանները

քակելու վրայ են, անմիջապէս ես ալ հոն կը հասնիմ:

— Դու, կ'ըսէ ինծի պատանի մը, շնորհք կ'ընես զմեզ չլրտեսես, ապա թէ ոչ վէռսայլցւոյ մը պէս գլուխդ կը ջախջախեմ:

— Լուցկիկներդ պահէ, տղայ, կ'ըսէ անոր երկայն մօրուքով ծերունի մը. այդ լրտեսը մեզի քար կրելու ծառայէ պիտի: Անանկ չէ պարոն, շարունակեց ըսելու մեծաւ քաղաքավարութեամբ, հոն տեղի քարերը հոս կրելու աշխատանքը յանձն պիտի առնու: »

Առանց դժուարութիւն մը ցուցնելու կը հպատակիմ, մեծ տոգոհութիւն մտածելով, որ եթէ զօրքը այս ատենս գան, պատնիշին վրայ յարձրկին և նոյնը առնուն, դեռ ևս բերանս խօսելու չբացած կրնան զիս հրացանով սպաննել: Սակայն տեսարանը որուն մէջ կը գտնուիմ ընդդէմ իսկ կամացս հետաքրքրութիւնս կը գրգռէ: Այն կատաղի մեզերայք որ զլուխնին կարմիր լաթով մը կապած և իմ իրենց կարկառած քարերն երազաբար ձեռքէ ձեռք կ'անցունեն, այն մարդիկն որ սալայատակին քարերն առնելով վրայէ վրայ կը դիզեն, որ և մերթ ընդ մերթ գործերնին ընդհատելով աղջկան մը մատուցած սուրճը կուլ կու տան, այն փունջ կապած հրացանք, այն երազաբար բարձրացող պատնէշը, մեր չորս կողմի լուծիւնը, մերթ պատուհանի մը կամ դրանը մէջէն ելեցող և իսկոյն անյայտ եղող հետաքրքիր զլուխ մը, կռուին աղմուկն որ հետզհետէ կը սաստկանայ, և ասկէ զատ ալ լի արևու մը խայթող պայծառութիւնը, այս ամենը չեմ գիտեր ինչպիսի ձախորդ ու միտք գերող զարհուրելի կերպարանք մ'ունին: Միւս կողմանէ ալ մինչդեռ մէկ դիէն կ'աշխատին միւս դիէն ալ խօսելու հետ են ու ես անոնց մտիկ կ'ընեմ: « Վէռսայլցիք գիշերանց քաղաքը մտեր են: Առաջին շրջանակին 13դ ու 143դ վաշտերը ըզՄիւէդ և զՏոֆին դռները, անոնց ձեռքը յանձներ են: « Այդ երկու 13 թիւը անոնց զլուխը ձախորդութիւն

պիտոր բերեն » կը կանչէ կնիկ մը : Վինուա 'ի Դոգքատէրօ բանակեր է և Տուէ 'ի Բուան տիւ Ժուռ, և երկուքը միաբան յառաջ կը քալեն : Երկու ժամու կռուէ մը ետքը Շան տը Մառսը դաշնակցաց ձեռքէն առնուեր է : ՅԱրք տը Դոնինֆի հրետանի մը կայ որ ըզ-Շանդ էլիզէ կ'աւլէ և զԴիւիլրի կը զընդակոծէ . . . : Ի Դիւիլրի թնդանօթք կան որ Արք տը Դրիոնֆի կը պատասխանեն : Մարինեի ճամբուն վրայ ոստիկանութեան զինուորը անձնատուր եղող տասուերկու պահանորդը հրացանահար սպաններ էին, մարմիններն ճամբուն վրայ թողլով : Ի ռիւ տը Սէվուր Ֆլուռանսի վրէժխնդիրը երդուրնցեր են մինչև ցյետինը մեռնելու : Հիմա 'ի Շանդ էլիզէ, պատերազմի պաշտօնարանին չորս կողմը և Հօսման պուլվառին վրայ կռուելու հետ են : Տոմարովսքի Միւէզ զղեկին մէջ սպանուեր է : Վէռսայլցիք Սէն Լազար երկաթուղոյն վրայ կը յարձըկին և միանգամայն Բեբինիէն զինուորանոցին վրայ ալ կը քալեն : Մատնուեր, ծախուեր, յանպատրաստից բռնուեր են, բայց փոյթ չէ, յաղթեն պիտի : Ա'լ զլխաւորի կամ զօրավարի պէտք չունինք, պատնիշաց ետևը ամեն մարդ մարաջախտ է :

Այս ատենը ութ կամ տասը փախըստական մարդիկ Շօսէ տ'Անդէնի փողոցէն վազելով կը հասնին ու կ'աղաղակեն թէ վէռսայլցիք զինուորանոցին տիրեր են, և հրետանի մը կանգնելու կ'աշխատին : Տըլէքլիւզ ալ պատերազմի պաշտօնարանը գերի բռներ են :

— Զճմարիտ չէ, կը կանչէ մարանապետուհի մը, քիչ մը առաջ ԵՅՊէլ տը Վիլ տեսանք զինքը :

— Այո, այո, կը կանչեն միւս կանայք, ԵՅՊէլ տը Վիլ է : Մեզի միգուա, ԵՅՊէլ մը տուաւ, և Ժիւլ Վալէ ալ մեզի ըսաւ թէ վէռսայլցիք Բարիզէն պիտոր չելլեն : չորս կողմէն զիրենք մէջ փակելով, երկու օրուան մէջ ամենայն ինչ լմնայ պիտի :

— Կեցցէ վիճակ, կը կանչեն բոլոր խռովարարք :

Պատնէշը լմնցած է, և պաշտպանը վայրկեանէ վայրկեան կը սպասեն որ վէռսայլցիք վրանին յարձըկին :

— Դուն, կ'ըսէ ինծի ենթասպայ մը, եթէ մորթդ կորսնցնելու կը վախնաս՝ կրնաս երթալ :

Չեմ թող տար որ ինծի աղաչեն այդ ազդին հնազանդելու : Զամբաս ետ կը դառնամ : այլ պուլվառը առջինէն ալ աւելի ամայի է : Միայն դռներուն ու մանց առջին մէկ քանի մարդոց խումբեր կը տեսնեմ : Ստոյգ կ'երևնայ թէ ժողովքին զօրքը յաջողութեանց դիպած ըլլայ քաղաքը մոռնելէն ետև : Դաշնակիցք բազմաթիւ կողմանց յարձակմունքներէն և անոնց սաստկութենէն յանկարծակիի գալով, ետ քաշուեր են : Ի վերայ այսր ամենայնի 'ի Բլաս տը լա Գոնգորտ դեռ ևս ամուր կը կենան, և 'ի Բլաս վանտոմ մեծ բազմութեամբ բանակած են ու հետերնին շատ թնդանօթներ ունին : Մոնմառուէն կատաղութեամբ կը գնդակոծեն : Վիվիէն փողոցը կը մոռնեմ, ու հոն ոմանց կը հանդիպիմ որ լուր առնելու ելեր են և որոնցմէ ես ալ կը տեղեկանամ : « Ֆօպուր Սէն Ժէոմէնէն երկու ազգային պահանորդաց վաշտը, հրացաններնուն կրուկը վեր վերուցած՝ զօրաց ընդ առաջ գնացեր են : Ազգային պահանորդաց գնդապետ մըն է որ նախ և առաջ այդ թաղին մէջ եռագոյն դրօշը սնկեր է : Համարակալութեան պաշտօնարանը ռումբի մը իյնալովը բռնկեր է, սակայն ջրհանք, հանդերձ գնդակաց անձրևովը յաջողեր են մարելու » : Ի Բլաս տը լա Պուռս երեք հարիւրի չափ դաշնակիցք պատնէշ մը կանգնելու հետ են : այլ ես փորձն առած ըլլալով՝ քայլս կ'երազեմ որ քար կրելէն ազատիմ : Մերձակայ փողոցներն շատ քիչ մարդ կը տեսնեմ : Կարծես թէ Բարիզ պահուրտած է : Դընդակոծումը հետզհետէ կատաղաբար սաստկանալու հետ է : Բալէ Ռուայալի պարտէզին մէջէն կ'անցնիմ, ուր հազիւ

թէ մէկ քանի հոգի կը տեսնեմ որ ժուռ կու գան. պզտի աղջկանց խումբ մըն ալ չուանով խաղալու դբադած են: Ռի վոլի փողոցը լի է բազմութեամբ: Օղէլ տը վիլէն եկող պահանորդաց վաշտ մը վազելով կ'անցնի: Սև գեղեցիկ ձիու մը վրայ հեծած երիտասարդ մը անոնց առջևէն կ'երթայ. Տոմպրովսքին է, ուրուն համար ինծի ըսեր էին թէ մեռեր է: Գոյնը շատ նետած է: Ոմանք կ'ըսեն թէ Միւհեդ դղեկին մէջ ումբէ մը կուրծքին վրայ զարնուելով գետինը փռուուեր է, բայց ումբը մին մէջ չէ մըտած: Այս վաշտը չուոյ երգը եղանակելով կ'անցնի: Այս խաղալարաց մէջ նաև զինեալ կանայք ալ կան. անոնցմէ մէկն որ Տոմպրովսքին ետևէն քանի մը քայլ հեռուանց կը քալէ, գրկացը մէջ պզտի տղայ մը կը վերցնէ: Մարդ աչքը դէպ 'ի Գոնգորտի հրապարակը դարձնելով ծուխ մը կը նշմարէ որ Գիւիլրի տանիքէն կարծես թէ կ'ելլէ: Համարակալութեան պաշտօնարանին առջևը, պատնիշէն քիչ մը ասդին, սև կոյտեր կը տեսնուին, և կարծես թէ անիւներ կը նշմարեմ: Թնդանօթ են կամ ջրհանք: Անոնց չորսդին խառնափնդոր շարժմունքներ կը նշմարեմ. որոշ կերպով հրացանից բոմբիւնքն կը լսուին, սակայն շառաչը կարծես թէ Շանգ իւլիգէն կու գայ. պատնիշէն չեն հարուածեր: Քայլս դէպ 'ի Օղէլ տը վիլ կ'ուղղեմ: Առջևէս ստէպ ստէպ սուրհանդակք արագաքայլ վազուածքով կ'անցնին կ'երթան: Դաշնակից զօրաց ընկերութիւնը միջոցէ միջոց իրենց տըրցակ կտպած հրացանից չորս դին պառկած կը հանգչին: Լուվուի փողոցին մօտ պատնիշ մը կայ. քիչ մը անդին նմանապէս ուրիշ մը կայ, և դարձեալ ուրիշ մըն ալ անկէց անդին: Սէն Ժէռմէն Լ'Օզրուուայի առջևը շատ մը կանայք նստարաններ խորտակելու զբաղած են, մինչդեռ տղայք դատարկ տակառներ կը դրոտկեն ու հողով լեցուն պարկեր կը կրեն: Քանի որ մարդ հետզհետէ Օղէլ տը վիլի կը մօտենայ, նաև պատնիշներն ալ աւելի բարձր կը դառնան,

աւելի աղէկ դինած և անոնց պաշտպաններն ալ աւելի բազմութիւ: Բոլոր այս մարդոց դէմքերուն վրայ եռանդ մը, աներկիւղութիւն մը ու կատաղութիւն մը կը տեսնուի: Խօսքերնին ամենաքիչ է, աղաղակնին ամեննին չիլսուիր: Երկու պահանորդք գետինը նստած թուղթ կը խաղան: Ասոնց քովէն կ'անցնիմ ու ճամբաս կը շարունակեմ, առանց մէկէ մը արգելք մը կրելու: Հոս տեղս պատնիշը լմացած են, որով վաթ չունիմ որ զիս քար կրելու բռնադատեն: Աչքերս դէպ 'ի վեր կը վերցնեմ. բոլոր պատուհանք գոց են. միայն մէկ մը բաց կը տեսնեմ, ուր երկու պառաւ կանայք կ'աշխատին անկողին մը յարմարցնելու: Կաղի ընկերութեան սըրճանոցին առջևը կեցած պահապան գինուոր մը, « հոսկէց չանցուիր », կը կանչէ ինծի. ես ալ այն ատեն սըճանոցին առջևը կը նստիմ, որ կ'երևայ թէ մասնաւոր պատուէրի բաց մնացած է, և ուր մէկ քանի օտոյներու առջևը սպայք նստած տաք տաք կը խօսակցին: Անոնցմէ մէկը ոտք ելլելով դէպ ինծի կու գայ և խստութեամբ կը հարցնէ թէ ինչ ունիմ այն տեղուանք. ես ալ յանդգնութեամբ պատասխանելով, անցագիրս գրպանէս կը հանեմ ու լուծութեամբ անոր կը ցուցնեմ: Չայն տեսնելով « աղէկ է » կ'ըսէ, և աթու մը առնելով քովս կը նստի: Ինծի կ'իմացնէ — արդէն գիտցածս — թէ ձախակողմեան գետափը ժողովրին զօրաց ձեռքն է, սակայն բոլոր փողոցաց մէջ կուռելու հետ են, անանկ որ զօրքը այն կողմէն հետզհետէ ետ կը քաշուի: « Փողոցաց կուռը կը տեսնես, մեր գործն է: Այդ կուռներուն մէջ Պէլլիլի սրիկայ պատանի մը Մաքմանէն աւելի հմուտ է: Բետոյ այս ալ կ'ըսէ. « Զարհուրելի բան պիտոր ըլլայ. թշնամին մեր գերինները կը սպաննէ: (Երկու ամսէ 'ի վեր վիճակին ձայնը շարունակ այդ է): Մէկու մըն ալ պիտոր չխնայեմ »: Կը հարցնեմ իրեն. « Արդեօք Տըլէքլիւզ է որ ընդդիմանալը շարունակել կ'ուզէ »: — Այո, կը պատաս-

խանէ, ծոէ քիչ մը. կը տեսնեն այն երկը պատուհաններն. սպայակոյտին սրահն է հոն: Տըլէքիւզ հոն տեղն է և հոնկէջ իր հրամանները կու տայ: Երեք օրուրնէ 'ի վեր ամենեին քուն եղած չէ. և քիչ մը առաջ հազիւ կըրցայ ճանչնալ զինքը. այնպէս փոխուած էր աշխատութենէն: Հասարակաց փրկութեան յանձնաժողովը անընդհատ խորհուրդ ընելու հետ է հոն տեղի սենեկի մը մէջ, յայտարարութիւններ ու վճիռներ տալով:

— Հա, հա, ըսի, վճիռներ:

— Այո, քաղաքացի, քիչ մը առաջ զիւցազնութիւնը վճռեց:

Սպայն ասկէ զատ ինծի ուրիշ շատ մը տեղեկութիւններ տալով կ'իմացնէ թէ Միլլիէն նոյն առտուն երեսուն ըմբոստ զինուորներ մահու դատապարտեր է, և թէ Ռիկօլ 'ի Մազաս գնացեր է « պատանդներուն վրայ հսկելու համար »: Մինչդեռ ինծի խօսելու հետ է, կը ջանամ տեսնել թէ ինչ կը հանդիպի Օդէլ տը Վիլի հրապարակին մէջ: Երկու կամ երեք հազար դաշնակիցք, շատ մը խումբ բաժնուած, գետինը նստած կամ պառկած են: Կարծես թէ մէկմէկու հետ կատաղաբար կը վիճեն: Հեռուները միջոցէ միջոց պառկեցուցած աթոռներու վրայ պղտի տակառներ դրած կան: Ստէպ ստէպ մարդիկ ոտք կ'ելլեն, տակառներուն կը մօտենան ու կը խմեն, և ոմանք նաև իրենց ափովը: Կանանց խումբեր կատաղութեան շարժումներով վեր վար կը պտրտին: Արք կ'աղաղակեն, կանայք կ'ոռնան: Սուրհանդակք Օդէլէն դուրս յարձրկելով ամենայն սաստկութեամբ ձիերնին կը վարեն. ոմանք Պասդիլի ուղղութեամբ կը դիմեն, այլք Գոնգորտի ուղղութեամբ: Այս ետքիններս մեր առջևէն կ'անցնին ու կը կանչեն մեզի. « Ամեն բան աղէկ կ'երթայ »: Բանկարծ մարդ մը Օդէլ տը Վիլի պատուհանէ մը դուրս կ'երկըննայ ու կը խօսի: Բոլոր դաշնակիցք զինքը տեսնելով, եռանդեամբ ոտք կ'ելլեն: « Վալէ է », կ'ըսէ ինծի մարդս: Եւ յիշաւի, քիչ

մը ճանչցայ զինքը: Ուսանող եղած առտուն շատ անգամ զինքը Սէրբանդ փողոցը եղող կաթնավաճառի մը խանութը կը տեսնայի: Բանաստեղծութեան հետամուտ այն ատեն՝ աննշան ոմէն էր. և . . . : Իր դիմացը վրայ դառն ու բուռն երևոյթ մը կը տեսնուէր: Քերթութիւնը թողլով օրագրութեան ձեռք զարկաւ, ապա օրագրութիւն ալ թողլով քաղաքականութեան տուաւ ինքզինքը: Արդ Օդէլ տը Վիլի պատուհանէ մը կը ճառախօսէ. այլ ես իր խօսքերը լսել չեմ կրնար: Բայց կը տեսնեմ որ ներս քաշուած ատենը, անհուն աղաղակ մըն է կը լսուի. « Կեցցէ վիճակ. Կորիցէ Վէռսայլ. յաղթել կամ մեռանել »: Այդ աղաղակներէն գէշ կ'ըլլամ. կը զգամ որ այդ մարդիկ ու կանայք սպաննել կ'ուզեն և նմանապէս ալ արիարար պիտոր մեռնին: Աւաղ, հոն տեղ քիչ մը հեռու արդէն սրչափ դիակունք փրուած կան. ոչ թնդանօթք և ոչ հրացանք առ վայր մը գոնէ դադարեցան: Յանկարծ կանանց խումբ մը Օդէլէն դուրս կ'ելլէ. ամբողջ մէկդի կը քաշուի որ անոր անցք տայ: Այս կանայք գէպ 'ի ինծի դիմեալ կու գան. առ հասարակ ամենքն սև հագած են ու թևերնին սնդուս մը կապած. գլուխնին ալ կարմիր ծոպ մը կը կրեն: Սպայն ինծի կ'ըսէ. « Ատոնք կրթիչ վարժապետուհիք են որ մայրապետաց տեղն անցան »: Յետոյ ոտք ելլելով գէպ անոնց կ'երթայ ու կը հարցընէ.

— Յաջողեցա՞ք:

— Այո, կ'ըսէ մէկը, թուղթ մը ցուցընելով, ահաւասիկ մեր յանձնարարութիւնը: Դպրատանց տղայք պարկերը շինելու և հող լեցընելու գործածութիւն պիտի: Անոնց երիցագոյններն պատնիշաց ետեւը հրացանները լեցընելու են, և ամենուն առ հասարակ պահանջողի բաժին ուտեստ պիտոր տրուի: Հասարակապետութեան համար մեռնողաց մայրերուն թոշակ պիտոր կապուի: Այդ տղաք կռուելու շատ փափաք ունին, զիտցէք. ամսէ մը 'ի վեր զիրենք շատ աշխատցուցեր ենք. այս բանս ի.

րենց հանգստեան տեղ պիտոր ծառայէ » :

Այդ կիներն որ երիտասարդ ու գեղեցիկ մըն է, շատ անուշ ժպիտով մը այդպէս կը խօսի, անանկ որ իմ վրաս դող կը բերէ։ Այս ատենս սպայակուտի երկու սպայք ձի հեծած Բլաս վանտոմէն գալով գահավէժ ընթացքով դէպ 'ի Օդէլ տը վիլ կը յարձրկին։ Քիչ մը ետքը փողը կը հնչէ, և զօրաց ընկերութիւնը հրապարակին մէջ կը ձևանան։ Օդէլին մէջ կարծես թէ մեծ խառնակութիւն մը կը տիրէ։ Մարդիկ վազելով կը մտնեն ու կ'ելլեն։

Այն սպայք որ հետո սրճանոցին մէջ կեցած են՝ շտապաւ ոտք կ'ելլեն, և իրենց զօրաց գլուխ անցնելու կ'երթան։ Չայնը կը տարածուի թէ վէռսայլցիք Բլաս Գոնգորտի պատնէշներն առեր են։ « Սոոյգն ըսեմ քեզի, կ'ըսէ սպայս իր գօտին կոճկելով, կարծեմ թէ գէշ չես ըներ տունդ երթալու, կրնայ ըլլալ որ քիչ ատենէն կուրը հոս հասնի »։ Այս խորհրդիս հետեւելու կը պատրաստուիմ, ու յետին հայեցուածք մը կուտամ հրապարակին։ Դաշնակցաց ընկերութիւնը, ոմանք քէյերէն, այլք Ռիւփլի փողոցէն, վազելով ճամբայ կ'ելլեն, « Կեցցէ վիճակ » կանչելով։ Չեմ գիտեր ինչպիսի զարհուրելի ուրախութիւն երեսնուն վրայ կը փայլի։ Երիտասարդ մը, գրեթէ տղայ, քիչ մը ետեւ կը մնայ։ Կին մը դէպ անոր կը յարձրկի ու ծոծրակէն հրելով կը կանչէ անոր. « Հապա դու. միթէ միւսնեւրուն հետ մեռնելու չես երթար »։

Ռիւ վիէյլ տիւ Դանրլը կ'անցնիմ, ուր պատնէշ մը շինելու հետ են. ես ալ քար մը կը տանիմ ու կ'անցնիմ։ Քիչ մը անդին խանութները բաց կը տեսնամ, անցւորք բազումք, միով բանիւ կեանք։ Գոնէ այս գործունեայ վաճառականաց թաղը կը ջանայ Բարիզու մէջ ողջ մնալ։ Հոս բնակող մը կարելի էր թէ ամենևին մտքէն չանցընէր այն զարհուրելի քաղաքական կռիւն որ մօտերը կ'ըլլուի, եթէ անցած ատենը չլսէր այն խօսակցութիւնները որոնց

մով ունայն տեղ զբաղած բնակիչքն իրենց սրտին անձկութիւնը կը մատնեն, և թնդանօթն՝ որ անգագար կը թնդայ՝ չկանչէր շարունակ. « Կը լսես ինծի. Բարիզ. ահա տուներդ կը խորտակեմ։ Կը լսես դու. ահա տղաքդ կը ջարդեմ »։

Պուլվարներուն վրայ դարձեալ պատնէշք կան, ոմանք բարձր, այլք դեռ ևս նոր սկսուած։ Բորդ Սէն Մարգէնի մօտ շինուածն ամենէն աւելի ահաւորն է։ Կարծես թէ այս տեղս խռովութեան ու նուաճման արիւնահեղ կրից նախասահմանեալ է։ Կը յիշեմ որ դեռ ևս տղայ եղած ժամանակս 'ի 1852, երկու երկաթեայ վանդակափեղկ զբանց ետեւ դիակներ տեսած էի և նմանապէս ձողերուն վրայ ալ արիւն։ Նորէն թաղս կը դառնամ. այլ ներսէս սաստիկ տըխրութիւն մը կը զգամ, և ինչպէս սըրտաբեկ, անզգայ, և մտածելու անկարող՝ ու երբեմն երբեմն աչքերս գոցելով կ'երթամ, նման այն մեռելի տանց որոնց փեղկերն փակ են։

Կը շարունակուի։

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

(Տես Հատ. ԻԹ. Երես 326։)

Գ. — Մ'ենեալ հով։

Է. Տէր տեղաց 'ի Սոգոմ և 'ի Գոմոր ծծումք և հուր 'ի Տեառնէ երկնից, և կործանեաց քաղաքսն գայնոսիկ և գամենայն կողմանս, և գամենայն բնակիչս քաղաքացն և գամենայն բոցս երկրին։— Մեռնեալ. ԺԹ. 24։

Այս ծովը կամ լիճը աշխարհիս պատմութե հնագոյն աւանդութեան մը հետ կապուած է։ Երբեմն հինգ ծաղկեալ քաղաքներ կային հոս. որոց բնակիչքը իրենց մեղաց չափը անցուցած ըլլալով, պատժեց զիրենք Աստուած. այն կենդանի գեղեցիկ տեղուանքը ահաւոր անապատ մը դարձան. և այն զուարթ